



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

7758

-2


Prairie Falcon

Steppe Falcon (?)

891-99

q-22

6-17-1910
1910



391.542-3

9-23.

ՃԵՐ ՍԻՐԱՀԱՐ

ՀԵՂԻՆԱԿ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԳԱԼՖԱԿԱՆ

ՄԱՄ ԱՌԱՋԻՆ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊԱԼԻՍ
(1870)

ԾԵՐ ՄԻՐԱՀԱՐ

891-99

891.5423

4-30

一〇四

ՀԵՂԻՆԱԿ

ՀԱ.ՄԲԱՐՁՈՒՄ ԳՍ.Լ.ՑՈ.ԵԱՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

$$\begin{array}{r} 1001 \\ \times 1326 \\ \hline \end{array}$$



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱԱՐԿԱՆ

1870 p

Ա. ԸՆԹԵՐՑՈՂՍ

ՍԵՐ ՎԻՊԱՍԻՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՎՐԱՔՐ ԽՆՀ
ՃԱՌԱՋՈՒԹԻՒՆ մ' ընելու իղձով՝ ՎԻՔՐԻԿ
ՎԻՊԱՍԻՆ ԺԵԱՆ մը ՃԵՌՆԱՐԿԻՆ ՎԻՎԻԱ-
ՔԵՇԱՆԻՔ :

Ամեն գործ ինչպէս իր օդուազ ունի,
ի հարկ է ԾԵՐ ՎԻՊԱՀԱՅԻ ալ իւր օդուազ
կունենայ :

ԹԵԱՂԷՄ գրիչ ՃԵՌՔ առաջ ատեննիս
կ'զզ այինք մեր տկաբութիւնը , սակայն
յուսով ըլլալով թէ Արդոյ Ազգայինքնե-
րողամիտ կը դանուին՝ համարձակեցանք
մեր կարողութիւնը չը ինեայել և նուիրել
աղջին , հաւասարի ըլլալով որ իր քաջալերը
ըլլ պիտի զշանայ . և որով շատեր եւս պի-
տի համարձակին աւելի սոսւար և ճոխ
հեղինակութեանց ճեռնարկել ողք ար-
դարեւ , կը խոստավանիմք , մենէ խիստ շատ
աւելի կարող , սակայն տպագրական ծառ
խուց գժուարութիւնները տեսնելով՝ հա-
կառակ իրենց եռանդուն զդացման , գը-

րիշնին կը մանդոտեն իւրեասց սբոերուն
հետ :

Մանք եւս եթէ մը բայս Ծեր սիրահա-
րի նկատմամբ սպասած քաջաշերութիւն-
նիս տեսնելու բազդառուրութիւնը ունե-
նանք, կը հաւաստեմք աւելի առուարդ որ-
ծի մը ձեռք զարնել :

Հ. Գ.



ԾԵՐ ՍԻՐԱՀԱՐ

ՔՂՈՒԽԵ Ա.

ԳԻՒՂ ՄԸ

Գաղղիոյ Քլերմոն քաղաքէն բաւական
հեռու զիւղի մը մէջ՝ հին ատենը՝ զրեթէ
1292 թույն պանդոկ մը կար :

Այս պանդոկը այնչափ անցուդարձ տեղ
մը ըրւաւուն, իւխստ քիչ յաճախորդներ
կ'ունենար : Պանդոկին մէջ մէմիայն այր
և կին մը կը բնակէին, որոց ապրուսոր
խիստ դժուարացաւ՝ երբ վերը երբ բոլորո-
վին ճանապարհորդ ունենալէ դադրեցաւ

Պանդոկին աշխարհաղրական գիրքը
դիւղին արեւելեան հիւսիւսային կողմը կիյ-
նար, և զիւղին ստորոտը կառուցուած էր :

Այս պանդոկը տեսնողը անմիշապէս
պիտի յիշէր Տաճկաստանի Ասիոյ կողմերը
ճանապարհորդաց հանդսութեան հա-
մար շինուած բայց շատ անդամ աւազա-
կաց որջ եղած պանդոկիները : Շինութիւնը

(6)

Հինցած էր, վերնայարկ մը՝ քանի մը խորշեր
ունէր որոց մին ճանապարհորդաց պառ-
կելու յատկացած տեղէն քիչ մը հե-
ռու, բայց դրան հիւսիւսային կողմը տար-
բեր ուղիով մը կ'երթեւեկուեր :

Այր և կնոջ մասնաւոր երթեւեկութիւնը
այս տեղէն էր և միանգամայն ասոնց հան-
գըստութեան տեղին :

Տգիտութիւնը ազգատութեան, և աղ-
քատութիւնը գահաւէժ խորհուրդներու
կ'ենթարկէ զմարդ :

Այր և կին տղէտ էին, բայց կինը բը-
նութեամբ աւելի խորամանկ :

Ասոնք՝ այր և կին, սկսան խորաման-
կութեամբ հեռաւոր տեղերէ ճանապար-
հորդներ ձեռք ձգելով և անոնց տեսակ
տեսակ գերեր խաղաղով ճանապարհորդաց
ինչքերը և ստակները կողոպտել և յա-
փըստակել :

Ամինը՝ որ տիկին Անթուան կը կոչուեր
բարձրահասակ, բոլորագիծ դիմօք և շա-
դանակագոյն մազերով գեղեցիկ էակ մը
էր, որ շատ ճանապարհորդներ ասոր գե-
ղեցիւթեանը յափշտակուելով՝ բոլոր ինչ-

(7)

քերնին կը վատնէին այս գեղեցիկ տիկ-
նոց անկեղծ և մտերմական սէլը իրենց
զրաւելու տենչանօք : Բայց ՚ի զ՞ւր : Մին-
չեւ այն վայրկեանն, յորում կարող կըլլար
կողոպտել իր ճիրանը իյնողները, կը
քծնէր, կը ժպտէր և վաղաքուշ ու քըն-
քուշ լեզուաւ կը դիւթէր իր որսը որպէս
թէ կը սիրէ, իսկ երբ որ և է միջոցով իր
որսը կողոպտեց խսկոյն պանդոկէն դուրս
կը վռնտէր, և եթէ ճանապարհորդաց
կողմէն ընդդիմութիւն մը տեմնար կամ
յափշտակաց ստակներուն յետս պահան-
ջում մը ըլլար, ամուսինը իրեն օդնութեան
կը կանչէր, դուրս կը վռնտէր զրպարտու-
թիւն մը իսկ աւելցունելով :

Հետեւեալ անցքը որ 1292 թուականին
տեղի ունեցած կը կարծուի խիստ հե-
տաքրթաշարժն է :

պանդոկին գուռը բացաւ , և մինչդու
դուրս պիտի եներ իր բաղդը որոնելու ,
որու իր ոտքով եկած էր : Զարմանալի
դիպուած :

Պանդոկին գուռը երբ բացաւ ձեր մը
տնաւ իւր դիմացը :

Այս ծերը թէպէտեւ ինչ կարդի անձ
մը ըլլաը չեր գիտյուէր , բայց աւելի վա-
ճառական կը կարծուէր : Պարզ ու ազ-
նուականի վշտը զուզ համարներ հադահ էր :
Իւր թառմած , կազմրափալ և առանց
պէխի գէմքը աւելի Անդգիւացիի մը կը
նմանէր քան թէ Փաղպիացւոյ մը :

Անթուան այսպէս յանէարծ որսի
մը հանդիպելուն վրայ զարմայած դռնէն
ետ ետ քաշուեցաւ առանց խօսք մը ար-
տապնելու : Նոյնպէս վաճառականն ալ
մէկ կողմ քաշուելով .

— Ներեցէք տիկին , ըստ , այսպիսի
անքաղաքավարութեամբ վարուելու , հոս
պանդոկ կարծեցի , և որովհետեւ այս
կողմերուն վրայ լաւ տեղեկութիւն չու-
նիմ , գիշերը ճամբէս շեղեցայ ու մինչեւ
այս կողմերը ինկայ : Օտար և միանդամայն

ՔՂՈՒԽԻ Բ.

ԾԵՐ ՍԻԲԱՀԱԲԸ

Առաւօտեան ժամը գրէթե 11 էր : § .
Անթուան կարմիր մետաքսեայ զարդա-
րուն զիեստ հագած , և ձեռնոցներ ան-
ցուցած ճերմակ և փոքր հովանոցով մը
Քէրմոն երթալու կը պատրաստուէր : § .
Անթուանի այս զիեստաւորիցը թէ եւ
յարմար ժամանակ շէր բայց ստիպուած
էր , որովհետեւ բաւական ժամանակէ ի
վ'ր է որ ճանապարհորդ մը կամ լաւ եւս
է ըսել՝ որս մը ձեռք չընծ ելով լաւ հա-
մոզուած էր որ եթէ քաղաք երթայ իր
փնտուածը դիւրաւ պիտի դտնար և զանի
բանպոկ բերէր :

Այրը դեռ կը ննջեր և թռչնոց երդոց
ճռուողումը հաղիւ սկսուած էր լսուիլ : Ա-
րեւը իր ճառադայիթները արձակիլ կ'ըս-
կըսէր :

Տ . Անթուան իր բոլոր գործերը կար-
դադրած ըլլալով՝ սենեկէն դուրս ելաւ ,

հոքնած ըլլալով , պանդոկ մը իշնալու
պէտք ունիմ , արդ կ'ուղեմ իմանալ թէ
հոս մօտերը պանդոկ կա՞յ :

Այս խօսքին վրայ Տ . Անժուան իր
զարմացական ուրախութեամբը ծերունոյն
պատասխանեց :

— ԱՇ , սիրելի պարոնս , հոս թէ եւ
պանդոկ է , բայց եթէ չըլլար ալ դարձ-
եալ կրնայի ընդունիլ , որովհետեւ հոս
բարի ճանապարհորդներէ ու օտարական-
ներէ կախորժուի և մեծ ընդունելութեամբ
կուզենը պատուել զձեղ :

— Միշտ չեմ սխալիր , ըստ ծերը , ը-
սել է որ հոս պանդոկ է :

— Ըսի ձեղ որ ճամբէ շեղած ճանա-
պարհորդները մեծ ընդունելութիւն կը
դտնան , և կարծեմ ձեր փափաքածն ալ
այս է :

— Ա.յո՛ Տիկին :

— Ուրեմն , կը հրամցունեմ զձեղ որ
վեր ենքք :

Եւ այսպէս երկուքը մէկէն պանդոկին
երկրորդ յարկը ելան :

— Ենորհակալ եմ , տիկին , ըստ ծեր

մէկ կողմ աթուեի մը վրայ նստելով և չոր-
կողմը նայելով :

— Արդարեւ կը զարմանաք , սիրելի ծե-
րուկս , ըստ Տ . Անժուան , կը զարմա-
նաք թէ հոս պանդո՞կ է :

— Եւ միանդամայն կը զարմանամ թէ
ուրիշ ճանապարհորդ ալ չըկայ :

— Ա.յո՛ , սիրելի պարոնս , եթէ կը հա-
ւասաք , կը հաւասառեմ ձեղ թէ մենէ ու-
րիշ մեկը չկայ :

— Ճշմարիտ կըսէք , տիկին , ըստ ծերը
իւր սրտին մէջ կառկածմանաց վերջին նշոյն
ալ փարատել ուզելով :

— Ա.յո՛ , ահա երկուքնիս ենք միայն :

— ԱՇ , Տիկին :

— Բայց ինչո՞ւ կը զարմանաք :

— Անոք համաք . . . :

— Խօսեցէք , պարոնս , խօսեցէք :

— Թէ ինչո՞ւ ընկեր մը և կամ ամուսին
մը չէք ունեցեր :

— ԱՇ , պարոն , եթէ ըսեմ , իրաւունք
կուտաք ընկեր մը կամ ամուսին մը չու-
նենալուս , և ուրքի ենելով՝ բայց պէտք է
որ առաջին անգամ ձեզի նախաճաշիկ մը

պարտաստեմ:

— Ահ տիկին, կար ես թէ ձեր խօսքերն ու դէմքը մարդս կը կշռայունէ:

— Գիտեմ, սիրելի պարոնս, ո իտեմ, բայց վերջը կը խօսինք. հիմայ քիչ մը ճաշբերեմ, ըստ և սենեակէն դաւըս ելաւ:

Ծերը կը մռածէր: Իւր ուշը մերթ պահողին և մերթ տիկնոջ վրայ կը յառէր, կը սէր իւրովի թէ ի՞նչ կը նշանակէ տիկնոջ այսպէս իր հետ սէրով վարուիլը, և ի՞նչ ըսել կուզէր, իր վարմանքը զբաւող գլխաւոր առարկան էր պանդոկի մը մէջ այսպէս առանձին կին մը ըլլան ուր՝ ի՞նչ պէս ըսինք՝ հազարաւոր անձինք կ'երթեւեւէին: Այս պարագաներուն տակ դադունէք մը կը դուշակէր, բայց երը տիկնոջ քիչ մը յառաջ՝ համրէ շեղած ճանապարհորդներն ու օտարականները հոս մեծ ընդունելութիւն կը դանեն» խօսքը միտքը կը բերէր, իւր կասկածը կը ցրէր: վերջապէս այնպէս համոզուեցաւ որ բարերար կին մ'էր ասի:

Ծերունոյն միտքը նոր բան մ' ալ յըղացաւ, որով իր հին երիտասարդական

զգացումները երեւան ելան, այսինքն տիկին Անթուանի սիրահարեցաւ: Էիկոնջ համար մաքուր սիրու և բարերար էակ մ' է կըսէր:

Ճանապարհովը թէպէտ ծեր՝ բայց առողջ կավալուածք մ' ունէր, որով ժամանակիս երիտասարդաց բաղդադամքը, որը ցոփութեամին և զեխսութեամինաւելթունակից ողէլիքներով՝ առանց առողջապահական կանոններուն հետամուտ ըլլալու, և տրիփական ախտին դերի ըլլալով՝ նիհար, գունատ, մէկ խօսքով՝ կմաղք մը կամ Օրանք Օթանքի կը նմանին, ցանկական զգացման մասին կը դերավանցէր և մէկէն կը գոգոսուէր երբ այսպէս տան մը մէջ առանձին և միանգամայն դեղեցիկ կին մը կը ներկայանար իւր աչքին առջեւ: Իւր հաճոյքը խիստ էր իդական սեռի վրայ:

Ծերունին այսպէս ցանկական երեւակայութիւններով պաշարուած էր: իսկ տիկին Անթուան սենեկին դուրս ելնելով ուղակի ամուսնոյն սենեակը գնայ որնոր իւր անկողնէն դեռ նոր կելնէր:

(14)

- Ապուշ ծեր մը , ըստ Տ . Անթու-
ան աժումային մօտենալով :
- Ալ , ըստ Անթուան , հաղիւ աչերը
բանալով :
- Եւ կարծեմ քսակն ալ ի՞է :
- Ա՛հ , ինչ կըսէք , ո՞ւր է այդ ծե-
րունին :
- Հսա՝ պանդոկին մէջը :
- Ուրեմն . . . :
- Ուրեմն պէտք չէ , ըստ Տ . Անթու-
ան աժումային խօսքը ընդմիջելով , ուրեմն
մուբեմն պէտք չէ . կընահք քիչ ժամանակի
մէջ ծերունոյն բոլոր ստակները առնել :
- Ինչպէս , ըստ Անթուան ոտքի եւ-
նելով :
- Դուք առանց ոտքի ձայն հանելու
պանդոկին դուրս կելնէք :
- Վէրջը :
- Վէրջը լսւ մը մեր նստած ոենեկին
պատոհանները պիտի դիմէք , երբոր ես
փրբիկ քար մը կը նետեմ , հինգ վայր-
կենէն վերջը դուռը բանալի մը խոթելով
կը բանաք , այնպէս որ՝ դռան բանիլուն
բայցուելուն ձայնը մինչեւ ծերունոյն ա-

(15)

կանջը հասնի :

— Վէրջը :

— Դուռը բանալէն յետոյ ծերունոյն
հետ ինչպէս վարուելնիդ կիմացունեմ:

Եւ տիկին Անթուան քիչ մը նախաճա-
շեկ պատրաստելով ծերունոյն սենեակը
մոտաւ և .

— Ահա , պարոն , ձեզի կըցածիս չափ
ժաշ պատրաստեցի , ըստ :

— Շնորհակալ եմ , տիկին , ըստ ծերը :

— Ահ , պարոն , կըսէիք թէ ընկեր մը
շունիք և ամուսնացած ալ չէք :

— Այո , սիրելիս : Ձեր գեղեցիկ դէմ-
քըն , որ բնութիւնը կարմլորակ այսերով
և կապուտակ աշուշներով պատկերացու-
ցեր է , իրաւամբ շատ անձանց սէրը իրեն
կը դրաւէ :

— Կը ծաղրէք զիս , պարոն :

— Միթէ գեղեցկութիւնը ծաղրելի է :

— Ահ , պարոն , ինչ ըսել կուզէք :

— Ոչինչ , սիրելիս , բոլոր խօսքելնիս
անօդուտ է :

— Սիրելի պարոնս , կը տեսնեմ որ սըր-
տերնուդ մէջ խորհուրդ մը կայ , կազա-

(16)(

չեմ զուրցեցէք :

— Խորհուրդ անուանածնիդ վիշտ մ'է ,
վիշտ մը որ սաստկապէս կայրէ սիրաս :

— Այստ մը :

— Այսո՛, սիրելիս , և սուրբ է :

— Ահ , իմացայ , սիրելի պարոնս , իւ
մացայ :

— Իմաշաք ու ընմն , այսչափս կը բաւէ ,
արդ , ըսէք ինձ , թէ ինչո՞ւ չէք ամուս-
նացած :

— Հաճելի չէ ինձ ամուսնութիւնը :

— Զարմանալի բան , բայց ինչո՞ւ :

— Որ վիճետեւ ինձ հաճելի անձ մը չեմ
կրնար գտնէր , քանզի եթէ մէկը սիրելու
ըլլամ և անոր ամուսնութիւն առաջար-
կեմ դրամ կը պահանջէ ինձմէ , սակայն
ես աղքատ մէկն ըլլալով՝ այսպէս դըժ-
բաղդութեան ենթարկուած եմ :

— Ձեղի պէս սիրելի էակէ մը ստակ
պահանջէլ , ահ , վատ մարդիկ :

— Ինչո՞ւ կարհամարէք , եթէ ձեր հետ
ամուսնանալ ուզեմ , զիս առանց ստակի
կընդունիք :

— Կրնաք փորձել :

(17)(

— Ինչպէս :

— Դուք զիս կ'ընդունիք :

— Եւ ինչո՞ւ չեմ ընդունիք :

— Որովհետեւ ծեր եմ :

— Ահ , պարոն , ես ծերելը շատ կը
սիրեմ :

— Այդ ալ իդական սեռին բնական մէկ
այլուռութիւնն է :

— Ա երջապէս , սիրելի պարոնս իմ
սիրս ձեզ սիրեց , զիս իբրեւ հաւատա-
րիմ տարիսաւոր մը կ'ընդունիք :

— Ահ , սիկին , կը զարմանամ ձեր հար-
ցման , չէք զիտեր որ ձեզ տեսնելու ի միր
հուր մը սիրս կը վասէ :

— Ահ , պարոն , զձեզ շատ կը սիրեմ ,
ըստ տիկին Անթուան , և սկսաւ ծերուն-
ուոյն դիրկը իյնալ ցուցանելու համար թէ
խանդաղատանօք կը սիրէ , սակայն ծե-
րունին ոչ այնափ պիմկըն :

— Գեղեցիկ վայրկեան և գեղեցիկ
դիպուած ըստ ծերունին մրմնելով , և
խօսքը տիկինջ ուղղելով՝ ահ , սիրելի սի-
կինս , անկալելի է որ ձենէ զատուիմ , ը-
ստ , այնպէս շարժուածքամբ մը սրպէզ թէ



կնոջ կասկածը փարատի :

- Եթէ մեռնիլ անդամ հարկ ըլլայ :
- Շատ գեղեցիկ և միանդամայն երջանիկ կըլլայինք, եթէ խոստմունքդ հաստատ պահես :
- Այս՝ պարոն, դուք խոստմանս հաստատութիւնը կը պահանջէք, բայց միթէ չունինք մեր մէջ այնպիսի կէտեր, որք՝ մեր զգացման հակառակ, մեր խօստման անհաստատութեան նշոյներ երեւցունեն :
- Պարզել պէտք է, տիկին, ըստ ծերունին :

— Աերջապէս չըկայ մեր մէջ այնպիսի իրողութիւն մը որ մեղ բաժնել հարկադրէ : Ես տարակոյո չունիմ թէ կայ :

— Բայց ի՞նչ ըսել կուզէք, տիկին, կրկնեց ծերունին :

— Եւ այն կէտն որ մեր թշուառութեան պատճառ ըլլալու կասկածն ունիմ:

— Լաւ, բացատրեցէք, սիրելի տիկին, որպէսզի համոզուիմ :

— Սիրելի պարօնս, ամեն խորհուրդ որոյ իրականալուն բնականապէս բաղձանք մը կզզանիք և որոյ անեղծ անելի միալուն

ապահովութիւն հարկ է, այս խորհուրդներէն շատը դրէթէ մէկ բանէ մը կախում ունին որ ընդհանրապէս անմիջապէս իսկ հարկ է : Ես քու տարիիաւորդ ըլլալու համար առաջին մեր փոխադարձ ոէրը պէտք է, որ արդարեւ երկուսէք կը կըեմք այս . սիրոյ վայելումներու յարատեւութիւնը անկէ կախում ունի, « մեր ապրուսոն է » այս որ գրամի պէտք ունի : Այսդ ես աղքատ դուք ալ նոյնը . ուրեմն կընայ ըլլալ որ մանք երջանիկ ըլլամք :

Խորամանկ կինը՝ առաջին անդամ սկըսաւ վինքը սիրյունել ջանալ, վերջը երբ որ ծերունին վինքը սիրել ուղեց, մկան ետ ետ քաշուիլ որ այսպիսիւ ստոկ պիտի պահանջէր, ինչպէս որ պիտի տեսնուի : Բայց ծերունոյն միաբրր չփոթեցաւ ու բնաւ :

— Ստակ, ուրեմն դուք զիս չեք սիրել հապա ստոկս :

— Ոչ, պարօն, ոչ, զձեղ չեմ մեղապրէք, աղքատութիւնը ամօթ չէ, ես կը սիրեմ զձեղ, բայց թշուառ ըլլալ չիմուղէր, և կարծեմ դուք ալ զիս թշուառ

(20)

ընել չէք ուղեր :

— Բայց ի՞նչու թշուառ պիտի ըլլար :

— Այսինքն իմ ու ձեր աղքատութիւնը թշուառ կինէ մեզ, այնպէս չէ :

— Եւ ինչո՞ւ գիտեք թէ ես աղքատ եմ:

— Անոր համար որ կեանքիս մէջ չեմ տեսած այնպիսի անձ մը որ զիս սիրե և աղքատ ըլլայ :

— Ուրեմն ի՞նչ է ձեր միաբը, չէք ու զեր սիրել զիս :

— Ահ, պարոն, երկինք վկայ ըլլայ որ զեզ կը սիրեմ, բայց դիտեք, ա՞հ, այն ատելի աղքատութիւնը պիտի հարկադրէ զմեզ՝ զատուիլ :

— Բայց, դուք տիկին, աղքատութիւն կըսէք և աղքատութիւն կը լսէք միայն, ինքնին կը վճռէք, կը ձեւէք ու կը չափէք առանց անդամ մ' ալ ինձ հարցունելու թէ ձեր՝ ինձ նկատմամբ տուած վը ճիւնիդ տեղի ունի՞ :

— Ի՞նչպէս, սիրելի պարոն :

— Զէք հարցունէք ընաւ թէ արդեօք աղքատ եմ: Զեր այդ կարծիքը ոխալ է, ես աղքատ չեմ, ընդհակառակը հարուստ :

(21)

— Աւա՛զ, պարոն, եթէ հարուստ ալ ըլլաք, հոս պանդոկի մը մէջ ի՞նչպէս պիտի համոզուիմ:

— Ի՞նչպէս կուզէք որ տեղեկանաք :

— Բայց ինչու, եթէ ստակ կուզես առ ըստ ձերը՝ գրպանէն ոսկով լի քսակ մը հանելով, որ սենեկին մէկ անկիւնը նետեց, ահա հարատութեանս մէկ փոքրիկ մասը որուն մէջ հարիւր ոսկի կը պարունակէ :

— Ահ, պարոն, ես ձեզի փոքրձեցի, ո՞չ, ո՞չ, ստակը ձեզի, ես կուզեմ որ հաւատարիմ սիրելի մը ըլլաք, ըստ տիկին Անթուան, քսակը ծերունեոյն յանձնելով:

— Առէք, սիրելիս, առէք, ձեզ կը յանձնեմ իբրեւ հաւատարմութեան դըրաւական :

— Ես չեմ ընդունիր, հաւատացի որ ը պիտի քածնուինք :

— Քանի որ այսպէս է ընդունէ, այսուհետեւ կեանքս անդամ քուկդ է :

— Նատ լսւ, պարոն, ես ձեռքս չեմ գպցունէք այս դումարին, ահա այս վոքրիկ տուիին մէջը կը դնեմ, ըստ Տ. Ան-

(22)(

թուան, և սենելին անկիւնը դանուած տուփին մօտենալով բացաւ, և փոխանակ տիփին մէջ գնելու՝ գրապանը դրաւ որ ծեր վաճառականը չը նշմարեց : Յետոյ ծերունւոյն գառնալով.

— Ահա՛, ամեն բան կատարուեցաւ, տուր ձեռքդ որ սեղմեմ:

— Վիայ ըլլայ Աստուած որ, ըսաւ ծերունին, չը պիտի բաժնուիմ ձենէ :

— Գիտցած ըլլաք, սիրելիս որ թե պէտ ծեր եմ, սակայն զշացմամբ երիտասարդ : Կը հասկընաք, ըսաւ ծերունին հեշտային գուգումով մը :

— Ըսի ձեզ, որ ես ալ զդայուն ծերերը շատ կը սիրեմ, յարեց տիկին Անթուան :

— Ուրեմն, պէտք է որ հաւատարիմ ըլլաք, սիրելիս, ըսաւ ծերունին, հեշտական յուղմամբ :

— Թէրեւս քիչ ժամանակէն պիտի տեսնէք հաւատարմութիւնս, սակայն մեր զւարճութեան համար քիչ մը դինիի հարկը կզգամ, կը հաճիք սիրելի ծերուկս, ըսաւ Տ. Անթուան :

(23)(

— Եւ ի՞նչու չէ, պէտք է որ քիչ մը գիւնիով համեմն մեր այս ուրախութիւնը :

— Ուրեմն բերեմ:

Այս միջոցին տիկին Անթուան պատուհանին փոքրիկ քար մը նետելով, սենեակէն դուրս ելաւ և աներեւոյթ եղաւ :

ՔԼՈՒԽԾ Գ .

ՊԱՆԴՈԿԱՊԵՏԸ

Գրեթէ հինդ վայրկեան անցաւ : Պանդոկին գրան բացուելուն ձայնը լսուեցաւ : Ծերը զարմացումէն սկսաւ ուշադրութեամբ զննել բոլորտիքը, դիտել սկսաւ թէ մարդու ձայն պիտի լսէ՞ր, բայց բան մը չը լսեց :

Քառորդ մը յեաոյ ճանապարհորդին սենեկէն ներս մէկը մոռաւ :

Ճանապարհորդը շուարեալ ու ապշեալ այս նորեկին երեսը կը նայէր առանց բառ մը անգտմ արտասանելու, սկնեկէն ներս

(24)

մանողը պանդոկապետն՝ առիկնոջ ամսութիւն
նընէքը ասխայու ուս զին ցընելաւ իրաւ

Պանդոկապետը զարմացական ձեւերով։
— Ան, ովէ էք դուք և ի՞նչ կուղեք ըստւ։
— Ի՞նչ, ըստւ ծեր ճանապարհօրդը։
— Կըսեմ թէ ո՞վէ էք, և ուսկից եւ
կած էք։

— Ի՞նչպէս եկած եմ, ի՞նչ ըսել կու-
ղեք, պարոն։

— Բուլ կուղեմ թէ ուսկից եկած էք։
— Գաղղիայէն։

— Եւ ձեզի չեմ հարցուներ Գաղղիան,
հապա կուղեմ իմանալ թէ ի՞նչպէս այս
պանդոկին ներս մոտած էք։
— Բայց, դուք իմենթէ էք, պարոն,
այդ ի՞նչ անսափօր հարցում է որ կ'ընէք,
ո՞վէ դուք։
— Պանդոկապետ էմ։

— Դուք էք։

— Այս, որ եղեկու ժամէ իւ վեր
հոս չի և դեռ հիմայ եկայ. կը պարմա-
խամ թէ դուք ի՞նչպէս եկած էք հոս ա-
ռանց իմ ներկայ ըլլալուս։
— Բայց, պարոն, ի՞նչէք կը խօսիք,

(25)

պանդոկապետը կին մ' է։

— Կին մը։

— Այս, կին մը ող հիմայ պիտի ու այ։

— Ծիծաղելի բան, ինչպէս կին, ցնո-
րած էք ի՞նչ էք, պարոն։

— Զէք հաւատար։

— Եւ միանդամայն կը խնդամ ալ։ Կըր-
նայ ըլլալ որ պանդոկին մէջ առանձին կին
մ' ըլլայ և պանդոկապետութեան պաշտօն
վարէ, կը հարցունեմ ձեզ ըստւ պանդո-
կապետը սպառնալից շարժումով մը։

— Վերջապէս ի՞նչ է ձեր միտքը և ի՞նչ
ըսել կ'ուղէք։

— Վերջապէս, պարոն, կը կասկածիմ
զէեղ առանձին հոս գոնելուս վրայ։

— Ի՞նչու։

— Որովհետեւ հոս պանդոկ է և հա-
ղարաւոր կահ կարասիներ, ստակ և այն,
կան, եթէ անոնցմէ պակասութիւն մը
գոնեմ ձենէ պիտի պահանջնեմ։

— Բայց, դուք ի՞նչէք կը խօսիք, կ'ե-
րեւակայէք ի՞նչ կընէք։ Զեզի ըսի որ պան-
դոկապետը կին մ' է։

— Պարոն, կըսեմ ձեզի թէ պանդո-

կոտիւն ես եմ:

— Ահ, ես կը հաստատեմ կին մը ըլ-

լալը, որոյ հարիւր ալ ոսկի յանձնած եմ:

— Հահ, հահ, հահ, յիրաւի դռւք

խենէ էք պարոն:

Պարոն, ըսաւ ծերը, սուը ձայնիւ մը,

սորի ելնելով, պարոն եթէ հաստատեմ

ի՞նչ պիտի ընէք:

— Ինչպէս պիտի հաստատէք:

— Ըսի ձեզ ո՞ր տիկնոջ հարիւր ոսկի

յանձնած եմ. դուք սա տուփին մէջ ըս-

տակ ունէիք:

— Երբէք:

— Ուրեմն, հիմայ պիտի տեմէք, ը-

սաւ ծեր վաճառականը և տիին մօտենա-

լով բանալ ուզեց:

Պանդոկապետը՝ որ արդէն ըոլոր դարձ-

ւածոց տեղեկացած էր իւր ամուսինէն,

ծերին տուփը բանալու ատեն ինքն ալ ան-

հոգութեամբ մը սենեկին մէջ ճեմել

սկսաւ:

— Շատ զարմանալի բան, ըսաւ խնդա-

լով, թերեւս տուփը յդի է և հարիւր ոսկի

պիտի ծնի, շատ բան, շատ բան, և ծե-

րունւոյն դառնալով՝ որն որ դլուխը ծոած
անդադար հարիւր ոսկին կը փնտուէր.

— Ի՞նչ ըրեք, կարծեմ շատ ծանր է ե-
ծեր ըլլալնուդ չպիտի կինաք հանել, ես
ալ մասնակցի՞մ ձեղի:

Ճանապարհորդ վաճառականը, յան-
կարծ տուփը մէկ կողմ հրելով՝ սենեկէն
դուրս ցատկեց:

— Ի՞նչ կըլլաք, ո՞ւր կը փախիք բարե-
կամ, ըսաւ պանդոկապետը:

— Պարոն, ըսաւ ծերը բարկութեամբ
մը, պարոն, ձեզ կ'ըսեմ որ սոյն կինը
պիտի դանէք:

— Բայց դուք, պարոն, յիրաւի խելա-
դար էք ինչ էք, ի՞նչպէս կին:

— Ձեզ կ'ըսեմ կամ կինը՝ կամ հար-
իւր ոսկիս:

— Կերեւակայէք, ինչ կ'ընէք պարոն,
ո՞վ է տեսեր կին:

— Կինը այս պանդոկին մէջ փակուած
է, շուտով պիտի դանէք:

— Ազատ էք, փնտուցէք բոլոր սեն-

եակները, և գտէք որ ես ալ տեսնեմ
ինչպէս կին ըլլալը:

(28)

Պանդոկապետն ու ծերը բոլոր սենեակ-
ները պարտեցան, բայց բան մը չը դատան :

— Ոչ, ոչ, պարոն, այս գաղտնիքը ե-
րեւան պիտի ենէ :

— Ալ բաւեց, պարոն, դուքս Ելք,
ապա թէ ոչ ձեղ հոս այսպէս առանձին
գոնինելով շատ բան պիտի պահանջեմ :

— Քայլ մ' անդամ չեմ առնուր, կամ
հարիւր ոսկիս՝ կամ կինը ձենէ պիտի պա-
հանջեմ, ինչու որ դուք այս գործին մաս-
նակից եք :

— Ալ կը բաւէ, բարեկամ, դուքս Ելք :

— Անկարելի է :

— Ուրեմն ի՞նչ պիտի ընէք :

— Ինչ որ պէտք է, եթէ չը յանձնէք
ինձ կամ կինը և կամ սաակներս, դատ
պիտի պահանջեմ ձէնէ :

— Շատ լու, եթէ կուզէք :

— Օն երթանք :

Եւ սկսան երկուքը մէկ դիւզապետին
տունն երթալ:

Հայոց անձնագիր պահանջան և առջ ք-
անցած պատճեն առաջանակ ու անձք յա-
տակ առաջանակ առ անձք յա-
տակ առաջանակ առ անձք յա-

Երբ որ դիւզապետին տօւնը հասան
պանդոկապետը՝ որպէսզի նախ ծած կաբար
խօսի, ծերէն յառաջ գատաւորին սենետ-
կը մոտաւ, սակայն երբ տեսաւ որ որիշ
օտար ճանապարհորդ մը կայ և ծերն ալ
արդէն խը ետեւէն հասած էր, յառաջ
անցնելով ըստաւ .

— Տէր, այս առաւտօտ քաղաք ի՞նամ էի
և երկու ժամու չափ կայ որ պանդոկա չի,
քաղաքէն վերագարծիս, երբ պանդոկը
բանալով ներս մոտայ, պանդոկին վերնա-
յարկը այս անձը տեսայ, և կասկածելի
մէկը թուելով ինձ հոս և կայ որպէսզի ով-
րութը խմացուի, և երբ . . .

— Կեցիր, ըստաւ ծերը, պանդոկապե-
տին խօսքը ընդմիշելով, և յարեց, Պա-
րան դիւզապետ, ես օտարական մ' եմ, և
ձիշդն ըսելով՝ այս դիւզին ուր, և ինչ
տեղ ըլլարէն տեղեակ չի. դիշերը ճամ-
բէս շղելով այս կողմերը ինկայ, հան-

գիտու մ՞ ընելու համար մինչդեռ տեղ մը
կը փնտուէի , պանդոկին դուռը բացուն-
րով դէմս կին մը ելաւ . հարցուցի իրեն
թէ հոս պանդոկ է , պատասխան ընդու-
նեցայ թէ այո՞ , ես ալ անմիշապէս ներս
մոայ և քիչ մը ընթրիք բնելս վերջը
զիւզը տուրտիլ ուզելուս առթիւ քովի ե-
ղած հարիւր գաղղիական ուսկիս պահելու-
համար այն տիկնոջ յանձնեցի : Տիկինն ըս-
տակները առաւ և սենեկին մէջը գըտ-
նուած տուփին մէջ կը դնեմ ըստ , և
քիչ մը դինի բերեմ ըսելով սենեկին ա-
ներեւութացաւ , վերջը այս անձը ներս
մոաւ : Արդ՝ քանի որ ստակներս այս ան-
ձին պանդոկը դանուած տիկնոջը յանձ-
նեցի , այս անձէն կը պահանջէմ օրինօք :

Գիւղապետը ծաղրական դիմօք , պա-
տասխանեց ծերին , թէ՝ ուրեմն պէտք է
տուփին առնէք եթէ տոտակ տուած էք
քանի որ կը խոտովանիք թէ տիկինը տու-
փին մէջ դրաւ :

— Բայց վերցուցած էք :

— Ով վերցուց :

— Չեմ դիտեր , դուցէ կինը :

— Ով է այդ կինը Պ . պանդոկապետ :

— Ամենեւին տեղեկութիւն չունիմ և ոչ
մէկէն , պատասխանեց պանդոկապետը :

— Եյ բարեկամ , ի՞նչ կըսէք , տեղե-
կութիւն չունի եղեր , ըստ գիւղապետը :

— Ինքն ալ մասնակից է այն տիկնոջ :

— Ի՞նչպէս :

— Որովհետեւ կրնայ օտարական մը ըլ-
լալ այն կինը որ պանդոկը կը դանուի և
ինձ ընթրիկ կը բերէ . Ի՞նչպէս կրնայ մըտ-
նել պանդոկը՝ երբ պանդոկապետը չեմ
ճանչնար կ'ըսէ :

— Կրնա՞ք հաստատել , հարցուց դիւ-
զապետը :

— Եւ ի՞նչ հաստատութիւն կուգէք աս-
կէ առելի , քանի որ դիւզիս բնակիչը չեմ ,
և մէկը չեմ ճանչնար . պանդոկապետը բաւ
դիտէ այս դաղանիքը :

— Բայց դուք տիկնոջ յանձնած էք , և
այդպիսի բան մը ամենեւին չը կրնար ըլլալ :

— Ոչ , Պարոն դիւզապետ , ոչ , դուք
սիսալ հասկըցած էք :

— Ախա՛լ ըստ գիւղապետը բարկու-
թեամբ մը , սխա՛լ կարծեմ դուք հոս է -

(32)(

կած է.ք սխալներ ուղղելու, այնպէս չէ
բարեկամ:

— Ուրեմն, ով էր այն կիրը, ըստ ծեռ
ըլ պանդոկապետին դաւանայով:

— Թու.ք դիսնալու է.ք ով ըլլալը, ո՞ր
հարիւր ուկի հաւատարմութիւն ըրած և
իրենյանձնած է.ք:

— Ես շատ ժամանակ թէ պանդոկա-
պետի և կամ թէ իւր տիկնոջ տոտակ յանձն
նած եմ պահելու համար, սակայն չէ
կորառած:

— Ուրեմն այս ալ չէր կորառեր եթէ
ըստածնիդ ուստ չըլլայ:

— Սուս կը խօսիմ, ըստ ծերը:

— Քանի որ չէ.ք կրնար ապացուցանել
թէ կինը ո՞ւ և որու քով յանձնելիդ,
ես կ'ըսեմ թէ ուստ է:

— Այս, ըստ, սենեակը դանուած օ-
տար ճանապարհորդ մը, որ սկիզբէն այս
դատը մտիկ ըրեր էր, այս՝ Պարսն գիւ-
ղապետ, ես ալ կ'ըսեմ որ ուստ է, որով
հետեւ ինչպէս կրնայ ըլլալ որ օտար գիւղի
մը մէջ անծանօթ տիկնոջ մը հարիւր ուկի
յանձնէ, և ծերունուն դառնալով՝ բա-

(33)(

բենամ, ըստ, ինչպէս կըլլայ որ մինչդեռ
այսափ անսավատներէն, և լեռներէն ան-
վտանդ կը մնայ այդշափ ոսկին, ու հի-
մայ այս բազմամարդ գիւղը պտըտելու-
համար որպէս թէ վախնալով անծանօթ-
տիկնոջ մը կը յանձնէ.ք, թէրեւս գուք
պանդոկը առանձին դապը և ուրիշ գի-
տաւորութեամբ մը եկած է.ք հոն, բայց
երբ տեսաք որ պանդոկապետը եկաւ,
զրպարառութիւն մ' ալ կ'ընէ.ք ինքվինքնիդ-
որդարացնելու համար, բայց կը կարծէ.ք
ո՞ր Պ. գիւղապետը ձեզ ազատ պիտի
թողու:

— Պարսն, պատիւս կը պահանջեմ ձե-
նէ, ըստ ծերը, եթէ ես գող էի, ի՞նչ-
պէս հոն առանց վախու, առանց կասկա-
ծի և ամենայն ապահովութեամբ նստած
կը ճաշէի, ինչպէս որ ի՞նքն ալ տեսաւ:

— Թու.ք ձեր արհեատը գերազանցեր
է.ք, անուանի գողերն ալ այսպէս կ'ընէին,
ըստ գիւղապետը:

— Նստ աղէկ, ըստ ծերը, գուք այս-
պէս յանշաւորները կ'արդարացնէ.ք, գուք
3

(34)

իրաւանց տէրերը իրենց իրաւունքէն կը պրկէք, շնորհակալ եմ Պ. գիւղապետ, և ձեզնէ ալ, բարեկամ, ըստ ճանապարհորդին դառնալով, շնորհակալ եմ որ զիս չարագուշակ կարծիքով մը արհամարձեցիք, յետոյ պանդոկապետին դառնալով՝ կեցցէք դուք ալ, Պարոն, որ զիս այս ձեր և միանդամայն փորձեալ հասակիս մէջ տիկնոջ հետ կողովտեցիք։ Մնաք բարեաւ Պարոններ, մնաք բարեաւ ըսերվ, մինչդեռ կոկոէր ծանր ծանր քայլեր առնուլ դէպ ՚ի սենեակին դուռը։

— Կեցի՛ր, ըստ պանդոկապետը, յանկարծ ոտքի ենելով, կեցիր, ո՞ւր կ'երթաք առանց ինք ինքնիդ ճանչցունելու։

— Պ. գիւղապետ, ըստ ծերը, պէտք չէ որ մարդս այսչափ հոգնեցունէք, ձըդեցէք զիս։

— Օրէնքը այսպէս կը պահանջէ որ ինքնինիդ ճանչցունէք թէ ով էք դուք։

— Լիոնի մէջ բամպակի վաճառական եմ։

— Լիոնի վաճառականը, ըստ գիւղապետը, զարմացմամբ մը, ո՞ւր էք այն բարեսէր անձը։

(35)

— Այս, ե՛ս . . . : — Բայց կեցի՛ք, ի՞նչ կ'ըսէք, ըստ ճամբարդը, Լիոնի վաճառականը իմ հօրեղբայրա է։

— Ձեր հօր եղբայրը, ըստ գիւղապետը։

— Այս անձը սուտ կը խօսի, և ծերին դառնալով, դուք ինքզինքնիդ արդարացնելու համար այդ անձին անունը ձեր վրայ կը կրէք, և որով նաեւ այն համբաւաւոր անձին անունը կ'արաւուորէք, ըստ պանդոկապետը։

— Ինչո՞ւ սուտ կը խօսիք, պարոն, ըստ գիւղապետը, յայտնեցէ՛ք ձեր ո՞վ բլլալը։

— Բայց ե՛ս . . . :

— Ըստ ձեզ թէ այս անձը կասկածելի է, և շատ բան կը յուսացուի իրմէ, ըստ ճամբարդը։

— Ահ, որչափ կը հոգնեցընէք զիս ըստ ծերը, զրականէն թաշկինակը հանելով որպէս թէ քրտինքը պիտի սրբէր, բայց թաշկինակին հետ թուղթ մ' ալ ինկաւ, ըսի ձեզի թէ . . . :

Եւ երբ թուղթ մ' իշնալը տեսաւ, իսկոյն գետնէն առաւ, և երբ գիւղանը դընելու կը փուղթար, գիւղապետը տեմնելով.

— Ի՞նչ թուղթ է այդ, տեսնե՞նք, ըստ:

— Ոչինչ, ըստ ծերը, թուղթը ձեռացը մէջ սեղմելով:

— Ոչինչ թուղթ չըլլար, ըստ գիւղապետը, բե՛ր տեսնեմ:

Ծերը թուղթը պատռելու ճիգ մ' ըրաւ, բայց գիւղապետը մօտենալով իսկոյն ձեռքը բռնեց և առաւ:

— Տեսնենք սա ոչինչ թուղթը, ըստ գիւղապետը. և հետեւնալը կարդաց:

«Տէ՛ր

«Լիսի մէջ Շարլօն ընտանիքէն յոյսեր նիդ կարեցէ՛ք, ատոնց համար ամեն ջանք իդործ գրուեցաւ՝ բայց ապարդիւն եւ զաւ, այդ ընտանեաց մօտերս Փարիզ երթալով:

«Այսու ամենայնիւ Փէ՛րմօն մէջ ուրիշ ընտանիք մը ձեռք անցուցինք որ Բլուտը Փանկը կոչուի:

«Շատ հարուստ է :

— Հէ՛. . . . ի՞նչ կը լսեմ, Պ. գիւղա-

պետ, գոչեց ճանապարհորդը, որ տակաւին հոն էր, ի՞նչ ընտանիք :

— Բլուտ-աը-Ժան :

— Ա՛հ, իմ ընտանեաց անունն է, չարունակեցէ՛ք տեսնենք, ինչ ըսել կուզէ, ըստ ճանապարհորդը, հազիւ ինքզինքը բռնէլով :

Գիւղապետը շարունակեց :

«Ընտանեաց գլուխը, այսինքն, հայր բներնին որ (Բլուտ) կը կոչուի, ճամբոր «գութեան հարկադրեցինք կերպով մը, «վասնզի եթէ ինքը ներկայ գտնուէր, «թերեւս շատ գժուարութիւններ ծագէր:

— Ո՛հ, սարսափելի՛ գաւադրութիւն :

— Այդ թուղթը մեզ կը վերաբերի, որոյ մէջ պարունակեալ անունները իմ և իմ ընտանեաց անուններն են :

— Համբերեցէ՛ք, ըստ գիւղապետը, համբերեցէ՛ք, վերջը ամէն բան կ'իմանանք. և սկսաւ մասցորդը շարունակել:

«Այս ընտանիքը հինգ անձերէ կը բազ կանայ, հայր մը, մայր մը, երկու աղջիկ ու մանչ զաւակներով: Ամէն տաեն այս տան մէջ գրեթէ վեց հազար ֆլու

« բանդ կը գտնուի :

- « Ինչպէս ըսենք , հայրերնին բարձրա .
- « հասակ և քաջ անձ մ՞ է որ ճամբորդու .
- « թեան ելած է , եթէ այդ կողմէրը այս .
- « պիսի մէկու մը հանդիպիք , կարելի եւ .
- « զածին չափ հետը բարեկամ ըլլալով՝ աշ .
- « խատեցէք արդիւլել զինքը իւր ընտան .
- « եաց կողմը՝ կամ քաղաք ուրագ առնալէ :
- « Որովհետեւ այս գործը քիչ ժամանակի
- « մէջ չը պիտի կընոյ կատարուիլ :
- « Ահա այս երկտողիւս զուցէ շատ բան
- « հասկցուի »

* * *

— Տէր Աստուած , ինչ ըսել կուղուի ,
ըստ ճամբորդը , ինչ պիսի ընեն ընտանեաց ,
բայց շուտ շուտ , չիեր պատրաստուի : Ահ , Բլօտ տը Փան , իմ և ընտանեաց անունը... մնդ թակարմի բռնել Աստուած իմ , արիւնս կը սառի , չեմ կըրնար խօսիլ , ձիեր պատրաստուին , ձիեր ,
գոչեց տը Փան տաղնապով մը , և ոտքի ելնելով . ահ , շուտ ըրէք , օդնութեան համնինք ընտանեաց :

Այս յանկարծական իրողութեանց վրայ գիւղապետն ու պանդոկապետը ապշած մնացեր էին :

— Սպասէ , ըստ գիւղապետը ճանապարհորդին դառնալով . իմանակը նամակը և այնուհետեւ ինչ որ պիտի ընէք ըրէք . և ծերունոյն դառնալով . ինչ կը նշանակէ այս նամակը , բարեկամ , ըստ :

Ծպտեալ վաճառականը՝ այսինքն ծեղը սրտադողին հազիւ կրյաւ հետեւեալը արտասանել :

— Պ . գիւղապետ , այս նամակը սիսակմամբ ինձ զրկուած է , բայց իմն չէ . ինչ ըլլալը , ուսկից գալը և ինչ նշանակութիւն ունենալէն տեղեակ չեմ :

— Գիտեմ , գիտեմ , ըստ ճանապարհորդը , գիտեմ որ առանց բանաւոր պատճառի մը զիս ճամբորդութեան հարկադրեցին . նամակին մէջ հարուստ ընտանիք մ' ըսելով ինչ ըսել կուզէ արդեօք , ահ , ասոնց մէջ ներքին և շարադուշակ գաղտնիք մը կայ , և յարեց , Պ . գիւղապետ , այս անձը չը թողուք , ձենէ կը պահանգեմ ըսելով՝ մինչդեռ դուրս ենելու շար-

(40)(

ժում մը կը ցուցնէր՝ զիւղապետին մէկ
տկնարիը գէնքը արդիլելը տեսնելով. զա-
ւակնե՛րս, կի՞նս, Պ. զիւղապետ, ըստ :
— Ի՞նչ պիտի ըլլան ընտանիքո, ըստ
զիւղապետը :

— Ահ, չե՛մ զիտեր ձգեցէք որ երթամէ
— Բայց Քէրմօնի մէջ ձենէ զատ մէկը
չըկայ, կարելի է որ ուրիշ ընտանեաց մը
լարուած է այս թակարթը :

— Ոհ, մի՛ արդիլէք զիս, հինդ հոդիէ
բաղկացեալ ընտանիքը մենք ենք, և Հայ-
րենին ես՝ որ ճանապարհորդ մ' եմ, ինչ-
պէս կը տեսնուի նամակին մէջ :

— Բայց, կեցիք որ այս անձը քննու-
թեան առնուի, և երկուքո մէկէն քա-
ղաք պիտի զրկեմ:

— Ես չեմ կրնար սպասել, ըստ ճանա-
պարհորդը, վերջը եթէ ընտանեացս վը-
տանդ մը համդըպի պատճառը դուք պի-
տի ըլլաք :

Այս խօսքին վրայ զիւղապը զանգակը
հնջեցունելով ծառայ մը ներս մոտաւ :

— Պաթիսթ, ըստ զիւղապետը, եր-
կու ձի պատրաստուի, և այս անձը մին-

(41)(

շեւ իր քաղաքը պիտի տանիք, ես հիմայ
տեղեկագիր մը պիտի գրեմ և ձեզ յանձ-
նեմ, դուք ալ քաղաքին վերատեսչին
պիտի յանձնէք, իմացաք :

— Ծառան խոնարհելով դուրս ելաւ :
— Ամեն բան պէտք է կանոնաւոր ըլ-
լայ, ըստ զիւղապետը :

— Բայց ժամանակ չը կորսնցունէինք,
ըստ ճանապարհորդը :

— Ոչ, ոչ, հիմայ շուտ մը կը համիք
տեղերնիդ, սպատախամնեց զիւղապետը
և ծերունոյն դառնալով.

— Էյ, բարեկամ, կըսէիք թէ տեղե-
կութիւն չունիմ նամակէն և ինձ սխալ-
մամշ զրկուած է, ուրեմն ուրիշ մը նա-
մակը ի՞նչպէս բացած էք և ինչու չէիք
յանձնէր ինձ :

— Նամակը բանալո թէ և յանցանքիմ է
որ կը խոստավանիմ, սակայն ձեզի յանձնել
չուզելուս պատճառը զիս պիտի նեղէիք,
որովհետեւ վտանդ աւոր նամակ մ' է, ահա
ասոր համար չուզեցի ձեզ յանձնել :

— Բայց ուր է նամակին պահարանը :
— Պահարանը . . . :

— Ինչ պարագ տեղը կը հոգնիք Պ. դիւղապետ, Եթէ այս անձը անոնց մասնակից չըլլար, և կամ լաւ է ըսել, նենդաւոր և չար անձ մը չըլլար իր անունը պահելով բարեսէր վաճառականի մը անունը չէր կրէր իր վրայ, հարցուցէք թէ ի՞նչ է իր անունը :

— Պարոն . . . ըստ դիւղապետը . և չը կրցաւ շարունակել. քանի մը ձիերու խխնիւնը լսելով, որք տանը առջեւ կայնեցան : Գիւղապետը պատուհանէն դիտեց ինչ ըլլալը, և քանի մը զօրականներ տեսաւ. որ տունէն ներս կը մանէին . ինչ կայ արդեօք, ըստ մոտածելով մը, որ քաղաքէն զօրականներ եկած է :

Նոյն պահուն սենեկին դուռը բացուեցաւ, և զօրական մը ներս մտաւ ձեռքը մեծ և գոյ թղթով մը, որ անմիշապէս գիւղապետին յանձնեց :

Գիւղապետը ձեռքէն առաւ և մտովի կարդաց :

Բլէրմօն 1292 Մայիս 3

* Առ Պ. Գիւղապետն

* Երէկ գիշեր ժամը 6 ին Բլօտ որ Փան

կոչուած հինդ հոգիէ բաղլիացնեալ ընտան եաց չորսը մարդասպանաց ձեռքէն ըուտաննուած է, միւս մէկը այսինքն հայրերնին՝ Փան, ճամբորդութեան ելած ըլլալով՝ ընտանեաց քով չէ գտնուած, որով մարդասպանաց ճիրանէն ազատ մնացած է :

« Ոճրադործայ երկուքը ձերբակալուած է, զորս քննութեան առնուելով ուրիշ երկու ընկեր ունենալինին իմացուած է : Ասոնցմէ միայն մէկը այն մարդասպանութեան գործակից է, իսկ միւսը չարագործաց գործական է, սպաննութեան ներկայ չէ եղեղ :

« Անյայտներէն առաջինը՝ բարձրահասակ, թխագոյն երփտասարդ մ'է, և երկրորդը՝ կարճահասակ, կարմրափայլ դէմշ քով ծեր մը, որ շատ տեղ ինքզինք վաճառական ձեւացունելով ամեն ընկերութեանց մէջ կը մանէ և բաւական չարագործութիւններ կընէ եղեղ . անունն է Բօլ:

« Արդ կիմացունեմ ձեզ Պ. գիւղապետ, որ ոյս երկու անձը կարելի եղածին չափ գիւղին ամեն կազմը վինտաէք, և փոյթ տարէք որ չըլլայ թէ ուրիշ տե-

(44)

զեր ալ ֆսամներ հասցունեն :

* * *

Գիւղապետը երբ նամակին ընթերցումը
տւարուեց, խոժոռադեմ ծերունւոյն եւ-
րեմն ի վեր նայիլ սկսաւ, և քիչ մը յա-
ռաջ ծերին վրայէն ինկահ թուղթը կըր-
կին աշքէ անցուց՝ որ յայտնապէս կը ցու-
ցընէր ասոր կասկածելի անձ մը ըլլալը :

Գիւղապետը այս եղեւան սոսկումէն
կը մոտածէր թէ ճամբորդին՝ ընտանեաց
ամբողջապէս սպաննուած ըլլալը իմացու-
նէր թէ ոչ, և՝ նամակը գրասեղանին մէկ
կողմը դնելով և ի՞ք ալ միւս կողմը կըր-
թն լով մինչդեռ ասոր վրայ կը խորհէր,
ճանապարհորդը կողմակի և առանց գիւ-
ղապետէն նշմորուելու՝ դրասեղանին եւ-
տին անյնելով սկսաւ կ'արդալ այնպիսի
կերպով՝ որ ներկայ եղողներն իսկ չը նըշ-
մարեցին :

